



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-Ի

Կ Ո Ն Դ Ա Կ Ը

ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԱՆԴԱՄՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԷՍԻ ՈՐ Ի ՆԻՒ-ԵՕՐԲ ԵՒ ԿԱԶՄԱ-ԿԵՐՊՈՂԱՑ ՆՈՐԻՆ, ՀԱՐԱԶԱՑ ԶԱՒԱԿԱՑ ՄԱՅՐ ԱՅՈՒՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱՍՏԻ ՈՂՋՈՑՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՎ ՀԱՅ ԱԶԳԻ ՀԱՎԱՏԱՐԻՄ ԶԱՎԱԿՆԵՐ,

Աշխարհի շուրս կողմից եկել եմ Դուք և Ամերիկյան մեծ Հանրապետության հովանու ներքո Համազգային ժողով գումարելու, Հայ Ազգի անունից առկալելու քաղաքակիրք մարդկության խղճին, դեմոկրատիկ աշխարհի արդարադատության ի պաշտպանություն մեր համազգային արդար Դատի, հանուն բշխման քրեական իրավունքների:

Հայ ժողովրդի ազնիվ ներկայացուցիչներ, Ոգեշնչված հայրենասիրության և ազգահավաքման վառ զգացմունքներով՝ Դուք քաղաքական պարզաստեղ իմաստությունն ունեի գգալու և գիտակցելու, որ այսօր, առավել քան երբեք, Ազգն ու Հայրենիքը կանգնած են անկրկնելի ու բախտորոշիչ դարաշրջանի հանդեպ:

Հայ ժողովրդի առաջ այսօր հրամայաբար կանգնած են երկու ճակատագրական խրեդիներ. — ա. Հայության ազգահավաքումը իր նվիրական հայրենի հողի վերա և բ. վերատիրացումը մեր Մայր Հայրենիքի բռնազավթած հողերի:

Այս երկու խնդիրների նկատմամբ էլ Հայ ժողովրդի հարազատ հայրն ու պատմական անդամաճան ներկայացուցիչը՝ Սուրբ Էջմիածինը կատարել և կատարում է իր նվիրական պարտը՝ իրավանք սահմանենում

գործելով: Համայն աշխարհին և բոլոր պետություններին արդեն իսկ լսելի է դարձել նորա ձայնը:

Ազգային սուր Դատի բազմադարյան հավատարիմ պաշտպան Մայր Աթոռը, ունկրեղի Սփյուռքի տարագիր մեր զավակների արդար պահանջի, անդրդվելի կանգնած է իր կոշման ու պարտի կատարման պատասխանատու դիրքերում:

Այսօրվա Ձեր պատմական Համագումարը լավագույն արտահայտությունն ու արտահայտիչն է աշխարհագրականորեն անջատ, սակայն ազգայնորեն միակամ Հայ ժողովրդի:

Հայրապետական ջերմագին ողբույն Համագումարիդ,

Դուք եկել եմ միանգամ ևս լսել տալու աշխարհին Հայ ժողովրդի ձայնը, նորա կամքը միանամուտ և պահանջն արդար, երկրակամ պաշտպանության ուղին հարթելու և հարքանակով պահելու:

Հայ ժողովուրդը սիրեցյալ Հայրենիքի սահմաններում և իր բազմադարյան պատմական գոյության ընթացքում հերոսաբար պայքարել է ազգային անկախության և ազգամիջյան եղբայրության համար, հանուն արդար ու խաղաղ աշխատանքի և ընդդեմ կոռւմունքարար վայրագ կարգերի, հանուն

բոլորոնեան և մարդասիրության և բնորոշումն ունենալու փանաթիզմություն, հանուն ֆալաֆակրություն, ճշմարտության ու ազատության և բնորոշումն բարբառության, խաղաղության ու անիրավության: Դառեր շարունակ անքիվ-անհամար հանատակների ամենդ աշխարհում ու ճշխարհեքում է սրբագործված մեր հերոսական պայքարը: Մահ, անհավասար է եղել մեր այդ դարավոր պայքարը, սակայն մենք հերոսաբար շարունակել ենք, հավատացած այդ պայքարի անվերապան արդարության և վերջնական հաղթանակին:

Անհաղթահարելի արտափն ույծը, անօրինակ բունպետությունը և աննախընթաց կազմակերպված վայրագությունն է, որ բռնակեր ու տարագիր դարձրեց հայրենատեն Հայ ժողովուրդը:

Այսօր բախտավոր ժամն է եկել մեր ժողովրդի փրկության— ծայնն է հեշի մեծ հայրենադարձի, Ազգային Հայրենիքի սահմաններում, ազատ ու անկախ հայրենի Պետության հովանու ներքո ազգովին համախմբվելու:

Մեր հայրենի հարազատ իշխանությունը բացել է Սփյուռքի տարագիր հայությունը՝ առաջ Հայրենիքի դռները, որով ոչ միայն ազատում է Հայ ժողովրդին անխուսափելի ծովման ու ազգային դիմագրկման, օտարության մեջ հյուսվելու և անէնալու մեծ վտանգից, այլ և լիակատար հնարավորություն ընձեռում քվով անելու, ֆիզիկապես զորանալու և հայրենի հողի վերա, գտնապնդված կուստուրական ու տնտեսական մեծ հաղթանակներ տարած և վերելի համբան բռնած հարազատների մեծավարությունը, նոր զարկ ու բափ տալու հայ մշակույթի աննախընթաց զարգացման, հայ ժողովրդի բարեկեցության և ազգային հզորության ամրապնդման: Հայ ժողովրդի պարտականությունն է ամեն ինչ ստորադասել Ազգահավաքման, Հայրենադարձի նվիրական գաղափարի կենսագործման:

Արգո Համագումարի Պատուարժան Պատգամավորներից սրբազան պարտականությունն է վառ, անընդ պահել այս մեծ գաղափարը Հայ ժողովրդի մեջ, ղեկավարել Ազգահավաքումը, գլխավորել Հայրենադարձը, գործունե, պահել ու ծավալել համազգային խանդավառությունը, ապանակել ու հրաշխավորել տնտեսական, քաղաքական ու բարոյական բոլոր կոպանները:

Ողջույն Մայր Աթոռին և Հայրապետական օրհներոյուն Միաձնեալ Ս. Սեղանից Ազ-

գահավաքի ու Հայրենադարձի ազնիվ գործիչներին:

Սակայն նեղ են մեր ազատ Հայրենիքի նվիրական սահմանները, հայ Հայրենիքի հարազատ հողերը տակավին գտնվում են օտարի տիրապետության ու բռնադատության ներքո:

Հայ Հայրենիքի բունպետված հողերի վերադարձումը երկրորդ կարևորագույն խնդիրն է, որ Արգո Համագումարից մտահոգության ու աշխատանքների առարկան է հանդիսանալու:

Այս Դատը հին է, բայց նա կա և կմնա միշտ նոր, ֆանի դեռ չի ստացել իր վերջնական օրինական ու արդար լուծումը: Այս Դատի արդարությունը համայն մարդկության քաղաքական խիղճն է նվիրագործել և ազատասեր Պետությունների Կառավարությունները օրինականացրել: Սերի դաշնագիրը միջազգային-իրավական ու քաղաքական-պաշտոնական ճանաչումն է մեր իրավունքների, իսկ ամերիկյան դեմոկրատիայի մեծանուն նախագահ Վուդրո Վիլսոնի պատմական որոշումը նվիրագործումն է Հայաստանի պետական սահմանների: Իր իսկ օրվա Թուրք օրինական կառավարության կողմից ստորագրված այդ դաշնագիրը ցարդ անկատար է մնացել, շնորհիվ մեծ պետությունների շահերի հակամարտության և բռնի ուժերի ժամանակավոր հաղթանակի:

Մեր Դատը քաղաքական ողորմածության և ողորմության հարց չէ: Սերունդներ շարունակ բոլոր երկրների մարդասեր ու արդարամիտ ժողովուրդները, ազնիվ մտավորականները, ազատասեր քաղաքագետները, կրոնի ճշմարիտ ղեկավարները պաշտպանել են մեր իրավունքների արդարությունը: «Պաշտպանել հայ ժողովուրդը, նշանակում է պաշտպանել քաղաքակրթությունը» պատգամն էր ազատասեր անգլիական մեծ ժողովրդի մեծագույն մարդասեր քաղաքագետ Ուիլիամ Դադսոնը: Արգային դուստր, Հենս Բրայսը, Ռոբերտ Սեսիլը, Լյուդ Ջորջը, Քենտրեյբի պազային եկեղեցու բիստոսասեր, մարդասեր ու արդարամիտ հայրերը, ղոչ անգլիական ազնուսխոն մտավորականությունը պաշտպան է եղել մեր Դատին: Ազատասեր Հրեանիայի լավագույն զավակները և հեղինակավոր գործիչները՝ Անտոյ Յրան, Ժան Ժոնես, Յրեանիս դր Պրեսանս, Ժորժ Կլեմանսո, Արստիդ Բիբան, Կետտունը դր Կոստան, Դրեն Կոչեն և ուրիշ-

ները, անկախ իրենց հաղափական դավաճանքից, միշտ պաշտպան են կանգնել մեր Դատին: Ամերիկյան մեծ դեմոկրատիան, նրա լայնատոմ ու մարդասեր ժողովուրդը, պատգամավորները, եկեղեցու սպասավորները միշտ չեն պաշտպաններ են եղել մեր Դատի և մեծագույն պայքարողները Հայ հանատակվող ժողովրդի արյունակալ դահիճների դեմ: Վոլտեր Վիսոն, Ջեհարդ, Մորգենտաու և անրիվ շարանը ազատատենչ և մարդասեր ամերիկացիների անշահախնդիր ու անձնվեր պաշտպաններ են եղել միացյալ Հայ Հայրենիքի ազատության ու անկախության, ողջ հայ ժողովրդի երջանիկ կյանքի: Մոտ երեսուն տարի առաջ ամերիկական և եվրոպական ժողովուրդներն ու կառավարությունները սրբազործեցին մեր Դատը միջազգային դաշնագրով: Այդ ժողովուրդները չեն կարող մոռանալ իրենց իսկ վարած ազնիվ ու խանդավառ պայքարը հանուն Ազատ Հայաստանի, հանուն Հայ Ժողովրդի:

Առաջավոր մարդկությունը լավատեղյակ է, քե ինչպես Հայ Ժողովուրդը իր ազգային հանճարի ուժով ստեղծել է իր ազգային փայլուն մշակույթը, որ դարերի ընթացքում հանդիսացել է նորա գոյության ու զարգացման բարոյական մեծագույն կոպանը:

Որ Հայ Ժողովուրդը դարեր շարունակ պայքարել է իր անկախության ու ազատության համար և իր արյուն գնով պաշտպանել իր Հայրենիքը:

Որ Հայ եկեղեցին պաշտպանել է Առաջավոր Ասիայում Քրիստոնեությունը ընդդեմ հերքանական և այլ Քրիստոնեության բըշենամի պետությունների զորեղ հալածանքների և իր հերոսական պայքարով Քրիստոնեության ջերման վտանգը չեզոքացրել:

Որ Հայ եկեղեցին մասնակցել է Արևմուտքի և Արևելքի, եվրոպական կուլտուրայի և ասիական խավարամտության մեջ հարատևած պայքարին, պաշտպանել ու տարածել է եվրոպական առաջավոր կուլտուրան Մերձավոր Արևելքում և Միջին Ասիայում: Որ հայ հոգևորականությունը ստեղծել է իր հարուստ մշակույթը՝ գրականություն, արվեստ, գիտություն, այլ և կյանքի գրականությունը, որը բարգմանվել ու բարգմանվել է աշխարհիս բազմաթիվ լեզուներով և բանկազից աղբյուր է հանդիսանում համաշխարհային պատմագրության և առանձնապես արևելյան ազգերի պատմության լուսարանության համար:

Համաշխարհային գիտության և մասնա-

վորապես պատմագրության կողմից բազմիցս շեղվել է Հայ Ժողովրդի պատմական խոշոր դերը Առաջավոր Ասիայի կուլտուրական զարգացման համար:

Սակայն մեր ազգային Դատի արդարությունը հիմնված է ոչ միայն Հայ Ժողովրդի կուլտուրական անցյալի առժխվածման վերա: Մեր Դատի օրինականությունը հիմնված է Հայության դարավոր ու հերոսական պայքարի վերա, հանուն Հայրենիքի անկախության, Ազգի ազատության, իրավունքի ու արդարության հաղթանակի: Շատ հաճախ մենակ ու անհավասար ուժով է վարել Հայ Ժողովուրդը իր հերոսական պայքարը ընդդեմ ահաբեկի և արյունաբերու բռնապետության: 90-ական թվականների հայիական ջարդերը, 1915-18 թ. թ. կոտորածները, 1920-21 թ. թ. նահանգ ջարդերն ու կոտորածները չեն ջնջվել և չեն ջնջվի երբեք ոչ միայն Հայ Ժողովրդի հագում, այլ և ողջ արդարամիտ ու ողջախոն փառանքի պաշարների հիշողությունից: Միլիոնավոր անմեղներ են զոհաբերվել ու ճանաչակվել ոչ միայն Արդյուկ Համիդի ու էնվեր փաշաների, այլ և նույն փաշաների ու Քազիմ Կարաբեկիրների ղեկավարությամբ:

Սերի դաշնագրով սրբազործված միացյալ Հայաստանը, դա արդար հատուցում է ոչ միայն միլիոնավոր հայ ճանաչակների անմեղ արյան, այլ և օրինական վարձանատուցումը այն անօրինակ հերոսական պայքարի, որ Հայ Ժողովուրդը Ազգովին մղել է 1914-18 թ.թ. ընդդեմ գերմանական իմպերիալիզմի և բուրժական դահմապետության: Վիսոն քե կոյդ Ջորջ, Կլեմանտ քե Օրլանտո ըստ ըստ ու հանդիպելու ազդարարել էին Հայ Ազգի սրբազան իրավունքը՝ ազատագրվել բուրժական անագորայն բռնապետությունից իր միացյալ ու անկախ Հայրենիքում: Մեծ է եղել Հայ Ժողովրդի մարտիրոսագրությունն ու հերոսական պայքարը ընդդեմ գերմանա-տանկական վայրագ բռնապետության: Սակայն բարձր է նաև ռազմա-փառապալան գեմատականը Հայ Ժողովրդի պայքարի: Յրանական բանակի հրամանատարը Մերձավոր Արևելքում՝ գեներալ Ալեմբիե Մյուրիայի գրավման հաղթանակի մեծ պատիվը հայ ժողովրդի մարտիկներին վերագրեց, իսկ գերմանական ընդհանուր հրամանատարությունն ու շտաբը, Հիդրենբուրգ-Լյուդեհոլմի, Հայ Ժողովրդի 1918 թվի դիմադրությունը Անդրկովկասում համարեցին կառուցազույն պատհաններինց մեկը իրենց ռազմական ձախարհության ոչ միայն

Մերձավոր Արևելքում, այլ և Կովկասում: Մեր պայքարը հաճուն իրավունքի և արդարության շատ բանգ արժեք Հայ ժողովրդին. Թուրքիան հարյուր հազարների ետ կոտորածներով վրեժ լուծեց իր անհաջողության համար:

Դեռ շատ է բարձր ֆաղափակիչ մարդկության հիշողության մեջ այն հերոսական մասնակցությունը, որ ունեցել է Հայ ժողովուրդը Հայրենական Մեծ Պատերազմում, անպարտելի կարմիր Բանակի մարտական շարժում: Հերոսաբար պայքարել են Հայ ժողովրդի ազնիվ զավակները այլ հակառակորդներում ևս: Ամերիկական ֆաշիստ Բանակի հրամանատարությամբ ֆաշիստներն են հայ մարտիկների առնչությունը, որոնք կռվել ու զոհաբերվել են ամերիկական հաղթական դրոշակի ներքո: Ֆրանսիական ազատամեծ ժողովրդին ևս լավ է հայտնի, որ ֆրանսիական ժողովրդի վարած հերոսական պայքարում իրենց նվիրական արյունն են թափել և հայ մարտիկները: Նրանք կռվեցին և ընկան ռազմի դաշտերում այն սրբազան հավատով, որ երբ հեղին իրավունքի ու արդարության հաղթանակի բաղձալի ժամը, մոռացության չի տրվի նաև Հայ ժողովրդի արդար Դատը՝ ազատագրումը հայրենի հողամասերի քուրմական բռնատիրության ճիւղերից և միացումը ինքնիշխան ու ազատ Սովետական Հայաստանին:

Այսօրվա Համագլխին Ձեր Համագումարը պետք է ազնվորեն և հանդիսավոր արժեքավորի ո՛չ միայն մեր դարավոր անօրինակ մարտիրոսագրությունը, այլ և մեր պանծալի հերոսամարտը: Ձեր ֆաղափական իմաստությունից, միակամությունից և անձնվեր եռանդից է կախված, որպեսզի լուսյան մատնվեն այն սև ուժերը, որոնք հանցագործ փորձեր են կատարում անմեղ զոհերին դավադրած արյունեղակ դահիճների պաշտպանությունն ստանձնելու:

Մենք անվերապահ իրավունք ունենք և՛ պահանջելու, և՛ ակնկալելու մեր արդար Դատի պաշտպանությունը, մանավանդ այսօր, երբ Ատլանտյան Խառտիան և Միացյալ Ազգերի Կազմակերպության Կանոնադրությունը ազդարարել են մարդկային իրավունքների, ազգերի ազատության, ֆաղափական արդարության և այլ բարձր սկզբունքներ:

Անխրալ կլինի, ֆաղափական ինչ-ինչ անարդար ու միտումնավոր նպատակներով,

մերժել մեր սիրեցյալ Հայրենիքից վտարանդյալ Հայի արդար պահանջը վերադառնալու իր Հայրենիքը, վերադարձնելու անազորային բռնության Թուրքիայի կողմից բռնագրաված հայրենի հողամասերը և միացնելու այն Ազգային-Անկախ Սովետական Հայաստանին: Ամերիկական մեծ դեմոկրատիան՝ ի դեմս իր նախագահ Վուդրո Վիլսոնի, Անգլիական հզոր Պետությունը՝ ի դեմս իր դիվանագետների-ֆաղափագետների՝ բազմիցս հայտարարել են, որ Հայ ժողովուրդը կարող է ազատվել և Հայ ժողովուրդը կարող է, որպես անկախ Պետություն, գոյություն ունենալ միայն Ռուս մեծ ժողովրդի պաշտպանության ներքո: Չարամտություն, բե՛ր՝ բերամտություն է վերագրել Սովետական Միության ինչ որ ագրեսիվ միտումներ: Հայ ժողովրդի Դատը հին դատ է, նախասովետական դատ: Հայ ժողովուրդը իր բոլոր հատվածներով ինքն է հարուցել և նախաձեռնել Հայկական Դատը իր ետ փոխում ևս, ինչպես և ողջ անցյալում:

Մենք, որպես պատմական ավանդապահն ազգային իրավանք և Գերագույն Պատրիարք՝ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Մեր սրբազնագույն պարտն ենք համարում արձագանքել բովանդակ Հայ ժողովրդի արդար պահանջին և պաշտպան կանգնել հարյուր հազարների անմեղ արյամբ ու հերոսական մահով սրբազործումը մեր նվիրական Դատին: Մեր Դատը, դա իրավունքի և արդարության դատն է: Հայ Ազգի և Հայրենիքի Դատը, դա ֆաղափական խղճի, պարտի ու բարոյականության խնդիր է: Եվ այդ Դատի հաղթանակը խնդրում և ակնկալում ենք աշխարհի զորեղներից, դեմոկրատական հզոր պետություններից, հուսալով որ, գեր այս անգամ, հեղադրյալ ֆաղափակիչը ու հերոս Հայ ժողովրդի արդար ձայնը լսելի կդառնա Միավորյալ Ազգերի Մեծ Ատլանտ և Հայ բազմաշաղար ժողովուրդը, այս անգամ զոհ, զոհ չի դառնա մեծ Պետությունների ընթացիկ ու ընչասեր հակամարտությունների: Հայ Ազգը և ետև Մերոնազարդ Պատրիարք՝ Կաթողիկոսը իրենց հույսն առաջին հերթին կապել են Սովետական Մեծ Միության հզոր ու արդարամիտ Կառավարության հետ, որի հանձնարել Առաջնորդը միշտ պաշտպան ու ապավին է եղել Հայ Ազգի, Հայ Հայրենիքի: Իր անպարտելի հերոսական կարմիր Բանակի և հերոսական

աշխատավորության ուժով Սովետական Միությունը ազատելով մարդկությունը հիտլերյան ստրկությունից, մոռացության չի տա երբևէ հաև Հայ Ժողովրդի արդար Դատը, բռնադատված հայ հողամասերի վերատիրացման հայկական պահանջը:

Շնչտելով մեր երախտագիտությունը Սովետական հզոր Պետության և Ռուս Մեծ Ժողովրդի հանդեպ, ավարտում ենք Մեր խոսքը և մաղթում հաջողություն Ձեր այդ ազգային մեծ ձեռնարկին: Մաղթում ենք

Բարձրյալին, որ Միացյալ Ազգերին հեռու պահե պատերազմի արհավիրքից, խաղաղություն և ազատություն ապահովե աշխարհիս բոլոր ազգերին և երկրներին: Մաղթում ենք Ամենակալին առաջնորդել Պետություններին ճշմարտության և արդարության հանապարհով, որ համայն աշխարհում հավերժ բազմվորե ազատությունն ու եղբայրությունը, խաղաղությունն ու բազմակերպությունը, որոնց այնքան ծառավի է մարդկությունը:

Շնորհ և ողորմություն Տյառն մերո Հիսուսի Քրիստոսի իջցե և հանգիցե ի վերա Ձեր, ամեն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԵ. . . 28

Տուա կոնդակս ի 15-ն ապրիլի

1947 ամի Փրկչական

Ի տոմարիս Հայոց ՌՅԴԶ

Տերահղում ամի Հայրապետության Մերոյ

ի Ս. ԷԶՄԻԱՆԻՆ